

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԻՐԾ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Ապահովագրական դեպքեր են համարվում հետևյալ իրադարձությունները

- Ամբուլատոր/պոլիկլինիկական օգնություն (Բժշկի խորհրդատվություն, գործիքային և լաբորատոր հետազոտություններ, պունկցիոն բիոպսիա) հետևյալ բուժ. կենտրոններից մեկում՝ «Մեդլայն» ԲԿ (ք. Երևան, Պուշկին 43) և «Դիագնոստիկա» ԲՄ (ք. Երևան, Մարգարյան 6/1),
- Անձնական պատահարներից ապահովագրություն (դժբախտ պատահարի հետևանքով առաջացած կոտրվածքներ, վնասվածքներ, մշտական անաշխատունակություն (I-ին և II-րդ կարգի հաշմանդամություն, մահ),
- Ստացիոնար / հիվանդանոցային օգնություն (անսահմանափակ ստացիոնար բուժ. ծառայությունների տրամադրում ֆիքսված գեղչերով),
- Սֆերա միջազգային բժշկություն (հեռահար կապի միջոցներով բժշկական խորհրդատվությունների տրամադրում, երկրորդ բժշկական կարծիքի տրամադրում, արտոնյալ սակագներով բուժման կազմակերպում այլ երկրների բժշկական կենտրոններում): Սույն ծառայությունը մատուցվում է տվյալ ոլորտում միջազգային լիցենզիա ունեցող տարբեր ուղղվածության բժիշկ մասնագետների կողմից՝ հիվանդության ախտորոշման, նշանակված բուժման կուրսի շուրջ խորհրդատվությունների և կապի հեռահար միջոցների օգտագործմամբ ախտորոշման տրամադրմամբ: Անհատական բժշկական եզրակացությունը խորհուրդներով հանդերձ տրվում է Ապահովագրված անձին հայերեն լեզվով՝ հեռախոսային կամ ինտերնետային կապի միջոցով:

Ապահովագրական պատահարներից բացառություններ

Ապահովագրական դեպք չի համարվում, եթե պատահարը՝

- Ապահովագրված անձի հանցագործ կամ անօրինական գործունեության արդյունք է,
- Տեղի է ունեցել Ապահովագրված անձի կողմից ակոհոլի կամ թմրանյութի օգտագործման հետևանքով,
- Ինքնասպանության փորձ է (վնաս առողջությանը) կամ ինքնասպանություն (մահվան դեպքում),
- Առողջությանը կանխատեսված հասցված վնասի արդյունք է,
- Տեղի է ունեցել ռազմական գործողություններին, մասսայական վիճաբանություններին և փողոցային անկարգություններին Ապահովագրված անձի մասնակցության հետևանքով,
- Տեղի է ունեցել վտանգավոր սպորտաձևերով զբաղվելու արդյունքում (ավտո և մոտոսպորտ, օդապարհկով թռիչք, մարտարվեստ, ալպինիզմ, լեռնային եւ ջրային զբոսաշրջություն, ստորջրյա լող և այլն),
- Ինսուլտի, Էպիլեպսիկ նոպաների կամ ամբողջ մարմնի այլ կարկամային (ջղածգային) նոպաների արդյունք է:

Ի՞նչ պետք է անել Ապահովագրական պատահարի դեպքում

- Անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում) հայտնել Ապահովագրական ընկերությանը ապահովագրական պատահարի առաջացման մասին, զանգահարելով (+374 60) 27-57-57 հեռախոսահամարով:
- Ապահովագրական ընկերությանը ներկայացնել ապահովագրության պայմաններով սահմանված ուղեկցող փաստաթղթեր:
Ապահովագրական պատահարի առաջացման դեպքում ապահովագրական հատուցումը կատարվում է համաձայն Ապահովագրական ընկերության Ապահովագրության պայմանների: Ապահովագրական պայմանագրի գործողությունը կանոնակարգող կանոններն և հատուցման ընթացակարգին առավել մանրամասն կարող եք ծանոթանալ այցելելով ապահովագրական ընկերության ստորև նշված ինտերնետային կայք:

«ՌԵՍՈ» ԱՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 62, տարածք 93-93/3

Հեռ.՝ (+374 60) 27-57-57, www.reso.am